600.0220.20.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2016 թվականի №220Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի №86Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հունիսի 16-ի և հուլիսի 4-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 12-ի «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №86Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0239 լիցենզիայի պայմանների՝

   1) 3-րդ կետի 1-ին ենթակետում «օգոստոսի 1-ը» բառերը փոխարինել «հուլիսի 20-ը» բառերով,

   2) 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է 2510 կՎտ հաշվարկային հզորությամբ «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) և այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշեր՝ 1338,0 մ և 1127,0 մ,
2) հաշվարկային ելք՝ 1,60 մ³/վ
3) հաշվարկային ճնշում՝ 187,10 մ
4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 2510 կՎտ:»,

«9. «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 2510 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ Р-650/178, 650 կՎտ, 2006թ.
2) գեներատոր №1՝ СГ2-630-12К, 630 կՎտ, 1978թ.
3) հիդրոտուրբին №2՝ Т-630/178, 650 կՎտ, 2006թ.
4) գեներատոր №2՝ СГ2-630-8КУ, 630 կՎտ, 1984թ.
5) հիդրոտուրբին №3՝ Р-1300/178, 1300 կՎտ, 2013թ.
6) գեներատոր №3՝ СГ2-1250-12У3, 1250 կՎտ, 2005թ.:»:

2. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի փետրվարի 8-ի №28/02-137 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման համար ստանձնած երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 հուլիսի 2016թ.
ժամը 16⁰⁰